



23. ԽԱՐԱ ՋՌՈՄԻՆ

Կելի իրեք հատ ախրեր: Էտ էրկու ախրեր կ'երթան Խարա Ջռոմին կը տեսնան, ամեկ հազար ղուրուշ կիտան, էն մեկ ախրոր փարա չեն խտա:

Էն պզտիկ ախրոր փարա չեն խտա, էն էլ կը խռովի, կ'ելի կ'երթա: Կելի կ'երթա խալիվորու մը ռաստ կիգա:

Խալիվոր կըսե. - Որդի՛, արի՛ երթանք, ես քի պապ, դու ինձի որդի, մա՛ ընձի փարա կա, մա՛ քզի, արի երթանք Խարա Ջռոմին տեսնանք:

Կելի կ'երթա, կըսե. - Ա՛ն էմա մաշթեն, տար ա՛ն էժ մի, տաս ղուրուշ տու, առ մա՛ղ մի զանգուլակ, արի՛:

Կելի կ'երթա զանգուլակ կառնի կիգա, կըսե. - Ամեկ մաղեն մեկ զանգուլակ կապե:

Կենին, զէժ կառնի կ'երթան, Խարա Ջռո սարի մոտ կը կայնին: Լալեն կը մտնի տուն:

Կըսե. - Խա՛րա Ջռո, բնագրկա մի էկե մեր սարի դուռ:

Խարա Ջռոմին է, քլոխ կը թալա փանջարից դուս:

Էտ խալիվոր էտ տղին կըսե. - Ես ինչ կ'ենի՞մ՝ դու ձեն մի հանե, կայնի թամաշա էրե զխարա Ջռոմին:

Խարա Ջռոմին է, քլոխ փանջարից կը թալա դուս, աչք կը թալա տղեն: Աղջկա ու տղի սիռտ օր զիրար պոմա, խալիվոր կը բերե էժ կը դեն գետին, կը զինա պոչեն:

Էդ Խարա Ջռոմին՝ օր խազար ղուռուշով կը տեսին, տղի սիրուն կըսե. - Էտ ի՞նչ բան է, - ձեռ կը թալե վիզ, կըսե, - վզեն կտրե, պոչեն մի՛ կտրե:

Կը բերա խալիվոր պոչեն կը քոթա գէծ:

Տղի սիրուն հարա Ջոռմին դոշեն կը բանա կըսե. - Դոշեն քոթա:

Վայ նաչար կը քոթա գէծ, կըսե. - Լալա՛, բարո՛ւշ մի տուր, թղխ էտոնք էփեն զուրանց միս, ուտեն, էրթպն: Էտ խալիվոր շատ փամբառակ կը խանա դու:

Խալիվոր բերեց զբարուշ կործեց վըր կրակին, մսեր էղի վըր օռքուն, ջուր էլից վրեն:

Մտավ տուն հարա Ջոռ ըսեց. - Լալա՛, էլի՛ գնա՛ եղ միս էփե, թխ էտոնք ուտեն:

Էտ խալիվոր շա՛տ բաներ պտի էնա մըր քլոխ:

Լալեն քնաց միս էփեց, էտուր էնոնք, դարցավ էկավ տուն:

Խալիվոր բրդուճ կ'էնա, դնա տղի անգաջ, տղեն բրդուճ կ'էնա դնա խալիվորի անգաջ:

Ըսեց. - Լա՛լա, էնա ջիեւ ե՛ս գրկեմ, կերցում, էնա խալիվոր դո՛ւ գրկա՛, կերցու:

Էլան զընացին, ջիեւ հարա Ջոռմին գրկեց, խալիվոր լալեն գրկեց, կերցուց:

Ըսեց. - Լա՛լա, գնա՛ էտոնց տեղրանք թա՛լ, պառկին, էլին էրթան, եղ խալիվոր շա՛տ բան կը հանա մըր քլոխ:

Խալիվոր կ'էլի զըմփա վըր տղին, տղեն կ'էլի չփա վըր խալիվորուն:

- Լա՛լա, - ըսեց, - ջաիեւ ես գրկիմ պառկեմ, խալիվոր դու գրկա պառկի, քնին, էլին էրթան, մըր քլոխ շա՛տ բան պիտի հանին:

Էլան պառկան: Տղեն գ'ուր բան տեսավ, խալիվոր գ'ուր բան տեսավ:

- Լա՛լա, - ըսեց, - լուսուն օր լուսնա խալիվոր չէլի՞ էրթա ըսե՛ ես գացի լալի մոտ, տղեն քնաց հարա Ջոռմի մոտ: Զէլի՞ մեր ձեն էցկա դուս, խազար դուռուշ կտեն, մոր ընծի կը տեսնեն: Էլ ո՞ն կիգա մզի տեսնա:

Ըսեց. - Վեց բեռ պիտի դնիմ տղի հետ, ճամբեմ ջամբզներու մեջ: Թի վեց բեռ էրեց տըսվերկու բերեց, ես զէնի կառնիմ, - ըսավ, - օր տըսվերկու բեռ մալ չբերիր ընծի, ես քու վիզ կը զանիմ, օր բերիր՝ քզի կառնիմ:

Էլավ, տղեն քնաց կայնավ չարշուկ քլոխ:

Ըսավ. - Բեռ մի օսկի կիտամ, ընծի էրկու հա՛ց:

Ջամբազ մ'էկավ, ըսեց. - Տղա՛, ընծի բեռ մի օսկի տո՛ւ, քզի էրկու հաջ տամ:

Փոկչին էկավ ըսեց. - Տղա՛, բեռ մի օսկի տո՛ւր ընծի, քզի փոկ մի տամ, կապե մեջք:

Ջամբագ մի էկավ, ըսեց. - Տղա՛, բեռ մի օսկի տու, սաքախտան քասե փաչա կը բերեմ, կեր:

Էլավ տղեն տվեց, սաքախտան փաչա կերավ:

Գնաց պառավու մի տուն: Ըսեց. - Նանա՛, անոթի եմ, փշու հաց բեր ուտեմ՝ իմ խելք գա վրդ ընծի:

Ըսավ. - Ինչո՞ւ զբեռ օսկին ցրվեցիր իըմեն հացով, խաշով, փոկով:

Ըսեց. - Լա՛ո, մի քրթուտի, սաքախտան թակավոր կը նստի թախտ, գնա՛ քու գանգատ թակավորին ըրե:

Էլնվ, սաքախտան թակավորն է, ուր աթոռ թալեր է ծառի տակ, նստե վրեն, դատ կը տեսնա:

Պառավ ըսեց. - Տղա՛, գնա՛ նստե ծառի բոտ, ինչ որ թակավոր ըսեց, ինչ էն ջամբագներ էկան գանգտվան, թակավոր ճամբախ կը խանե, թակավորի հրամանով ժողվա քոռ մալ:

Ջամբագմ՝ էկավ, ըսեց. - Թակավոր ապրած կենաս, իմա՞լ բեռ մի օսկի առեր եմ էրկու հաց:

- Շուն շանորդի՛, - ըսավ, - բեռ մի օսկի կիտա՞ն էրկու հա՛ց, անմախութենի հա՛ց է ուզեր:

Գնաց, էն մեկ ջամբագն էկավ, ըսավ. - Թակավոր՝ ապրած կենաս, ես բեռ մի օսկի առեր եմ փոկ մի:

- Շան որդի, - ըսեց, - մարդ բեռ մի օսկի կառնի՞ փոկ մի:

Քու պառեկեն զու մի կաշի խան, դրդա՛, էրա փոկ:

Ֆռնչին էկավ ըսեց. - Թակավոր՝ ապրած, ես բեռ մի օսկի առեր իմ քասե մի խաշ:

- Շուն շանորդի՛, - ըսավ, - սկի ո՞ն տեսեր է բեռ մի օսկի՝ քասե մի խաշ, սաքախտան էն տղեն օր ուր մալ ժողվեց, ես հողա էիմ, քու ոտ ու քլոխ էնիս խաշ, տանիս էն տղեն ուտե:

Էլավ էկավ ըսեց. - Մա՛յրիկ, թակավոր օր աղեկ դատ մի կը տեսնա, սաքախտան կերթամ իմ մալեր կը ժողվեմ:

Շուտ, սաքախտան տղեն քնաց կայնավ ուր մալի տեղ, որ ցրվիր է:

Ֆռնչին էկավ ըսեց. - Տղա՛, շուն շանորդի, քու հացերն ա՛ռ, քնա՛:

Ըսավ. - Էդ ի՞նչ հաց է:

Ըսավ. - Քու մալի գին է:

Ըսավ. - Շուն շանորդի՛, ես բարիչեր եմ անմախութենի հաց:

Ըսավ. - Դու ընծի էն զալըմ թակավորի մոտ մի՛ տանի, ես մեկ բեռ կ'էնիմ էրկու բեռ օսկի:

Փոկչին էկավ ըսեց. - Տղա՛, տղա՛, արի քու մալի գին տար փոկ:

Ըսավ. - Ես փոկ չը բարիչներ իմ, իմ մալի գին, քու պառնեկն զոլ մի կաշի խան, դրդա՛, տուր, ես կապեմ իմ մեջք:

Ըսեց. - Ընծի մըտ զալըմ թակավոր մի՛ տանի, ես մեկ բեռ օսկին կենիմ երկու բեռ:

Էղավ չորս բեռ:

Խաշչին քասե մի խաշ առավ էկավ:

Ըսեց. - Շան որդու տղա՛, արի՛ քասե մի փաջա եմ բերե քու մալի գին:

Ըսեց. - Շանորդի՛, ես բարիչներ իմ քու ոտ ու քլոխ, էնիս փաջա ու բերիս, քասե մի փաջա բեռ մի օսկու գի՞ն է: Էլի էրթանք մըտ թակավոր:

Ըսեց. - Տղա՛, ընծի մըտ թակավոր մը տա՛նե, մեկ բեռ կենիմ երկու, տամ:

Զջամբզներ խաբեց, վեց բեռ օսկի ու վեց ծի բարձեց, էկավ պառվու տուն:

Էլնվ ըսեց. - Նանա, ա՛ն էնա ճանկ օսկին քզի, զանգուլակ մի կախա քու չախրկի քթեն, օր չէլնի ջամբզներ բռնին ընծի մորթեն, գինան հալա բնզրկան տան մեչն ա, ես հիրիկվորե կը բառնամ կերթամ:

Երկու ջամբազ դրե վըր հերթին, կը պահե, օր տղեն էրթա, էլին սպանեն՝ մալն առնին:

Մտավ տուն իշկեց, օր պառավն է, չախրկի զանգուլակի ծենն է՝ կիգա:

- Շանորդի՛, - ըսավ, - ընչի՞ն էտ թուջար մարթ մզի խաբեց, էլնվ գնաց, դու մզի չհիմցուցիր:

Ըսավ. - Շանորդի, շո՛ւտ, մկա էն խասե Բաղեշու քաղաք:

Է՛, ջամբազն էկավ ըսեց. - Մզի քուր մի կա Բաղեշու քաղաք, թ՛էլի առե՞ծ, բալքի խաբելութենով մեր բեռ օսկիք առնե:

Սայի մարթ մի ճամբեցին Բաղեշու քաղաք, մըտ ջամբզներու քուր:

Ըսավ. - Ա՛խչի, տըսվերկու բեռ մալ քու ախբերտեկաց բերեց էն տղեն կերավ, բռնե մոտեն առ:

Ըսեց. - Տղա՛, քու աչքերո՛ւն մեռնին, իմ պապն ու քումն ախբեր են, արի՛ էրթանք տուն:

Հիրիկուն օր առավ էտ տղեն քնաց տուն, բերեց քաբառ էնից կերցուց: Բերեց երկու պաշըռաղի ստաքան խմցուց, խելք գլխեն առավ:

Ըսավ. - Տղա՛, ես ու դու դնվ կը բըռնինք, թի մեր իրեք ախչիկ տանին էնիմ օդե մի, քզե՛ օդե մի, թի դու իմ իրեք ախչկներ սլամաթ պոծար էկար, զնթի իրեք բեռ օսկի տամ քզի, թի սլամաթ չը պոծար էկար, իրեք բեռ օսկին կը խասնի ընծի:

Տղեն էլավ էկավ ըսեց. - Դե՛յ, Աստված, ինչպե՞ս էդ իրեք ախչկե ծեռ-
նեն ես պոծիմ: Թե կապելով ես ընծի պոծիմ, պտի իմ ամոթ կապեմ:

Էլավ էկավ սքթե մի զարկեց ուր մեկ կուշտ, սքթե մի զարկեց մեկ
կուշտ: Մեկ զարկեց ուր պլորի օրթալըխ, բերեց ուր ճուճ դահիմ կապեց:

Կնիկ զտ իրեք ախչիկ ռահալ, էրեք վըր էտ տղին: Ախչկներ էկան,
գտղի սքթեք արցկեցին:

Տղա՛, դու խելոք մը կենա, էլի զիրեք ախչիկն էլ փոզմիշ էրա՛, թող:

Ախչկներ էլան փոռ ու փոշման քացին վըր մամուճ, ըսին. - Մա՛մ,
մենք սլամաթ չպոծանք էտ տղեն:

Ըսավ. - Շա՛նորդի, դու զիմ իրեք ախչիկ լե փոզմիշ ըրիս, քու վեց
բեռ օսկին հասավ ընծի:

Ըսավ. - Էլի էրթանք մըտ թակավոր, թակավոր մըր դատ կը տեսնա:

Էլավ, կնիկ ըսեց. - Թակավոր՝ ապրած կենաս, էդ մարթ զիմ իրեք
ախչիկ փոզմիշ էրեք՝ ըղոր վեց բեռ մալ հասավ ընծի:

- Դա՛յ, տղա, - ըսեց, - դու ի՞մալ էդ իրեք ախչիկ փոզմիշ էրեր ես:

Ըսեց. - Թակավոր, ամր տու, իրեք նուխթ կա իմ սոտին, ըսեմ՝ զիմ
վիզ զա՛ր: Թակավոր, քզի մեկ գարակեր ծի մի կ'էղնի, կըլնիս կիտաս
մշակ, կըսես՝ տար սքթե մի զարկ, կահիմ կապե: Կը տանի սքթեն կը
զանի, կահիմ կը կապե: Մեկ մարթ մի կիզա էն ծիու կապ կը հերկնցու՝ էն
ծին համ զէն չո՛ւտե, համ զէն առտ: Ես զիս կապեր ի, պառկեր ի, էտ իրեք
ախչիկ էկան արցկեցին, ես էլա իրեքն էլ փոզմիշ էրի:

Թակավոր ըսեց. - Դէ՛լ, քարխանաջի, էդ մարդ զինք կապեր է, էդ
ախչկներ հո՞րի պտի էրթեն արցկեն, օր էլներ, փոզմիշ էներ:

Վեց բեռ օսկի կնկնից առավ, էտուր տղին: Էղավ տըսվերկու բեռ,
առավ էկավ հարա Ջոռմու խեչ:

Առավ զհարա Ջոռմին:

Ե՛ն խասավ ուր մուրազին, դու էլ՝ քոն:

